




ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԿԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԴԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
 Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
 Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
 Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
 Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
 Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
 Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Չամբուրգ, Գերմանիա)
 Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
 Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Կարին ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
 Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
 Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
 Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
 Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
 Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:
 Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.
 Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Мареk ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Гарик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Միլվա Մուրադյան. Ներգործական սեռի բայ-ստորոգյալների կապակցելիությունը տարբեր դասային խմբերի անուն-խնդիրների հետ.....335
Silva Muradyan. Relationship Possibilities of Transitive Verb-Pradicate with Noun-Objects of Various Class Groups

Сильва Мурадян. Сочетаемость возможности переходных предикативных глаголов с именными дополнениями различных классовых групп

Սիրանուշ Փարսադանյան. Հովհաննես Վանանդեցու «Կերակուր քահանայից» գործը.....343
Siranush Parsadanyan. «Kerakur Kahanayic» («Food For Priests») by Hovhannes Vanandetsi
Сирануш Парсаданян. Работа Ованеса Ванандеци «Пища для священников»

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Գրիգոր Բալասանյան. Խորհրդային Ռուսաստանում հայառի գրասեյակների գործունեության պատմությունից (1923-1927թթ.).....350
Grigor Balasanyan. From The History Of Armentrade Branches' Activities In Soviet Russia 1923-1927yy

Григор Баласанян. Из истории деятельности отделений Арменторга в Советской России (1923-1927 гг.)

Արման Եղիազարյան. Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցության գործունեության հիմնական ուղղությունները 1920-1930-ական թթ.....359
Arman Yeghiazaryan. The Main Activity Directions of the Social Democrat Hunchakian Party in the 1920-1930s

Арман Егиазарян. Основные направления деятельности Социал-демократической Гнчакской партии в 1920-1930-х годах

Մելիք Հովսեփյան. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և եգիպտահայ համայնքը 1964-1985թթ.....372
Melik Hovsepyan. The Committee for Cultural Relations With Armenians of the Diaspora and the Armenian Community of Egypt in 1964-1985

Мелик Овсепян. Комитет по культурным связям с армянами диаспоры и армянская община Египта в 1964-1985 годах

Սերգեյ Մանվելյան. Հայկական հարցի վերաբացումը. հայկական բարենորոգումների ծրագիրը Հովհաննես Արշարունի պատրիարքի օրոք (1911-1913թթ.).....382
Sergey Manvelyan. Evolution of Armenian Issue: Armenian Reforms Program During the Terms of Patriarch Hovhannes Arsharuni (1911-1913)

Сергей Манвелян. Развитие Армянского вопроса: программа армянских реформ при патриархе Ованесе Аршаруни (1911-1913 гг.)

ՀՈՎԻՏԱԿԱՆ ՎԱՆԱՆՆԵՐԻ «ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱԿԱՆԱՅԻՑ» ԳՈՐԾԸ*

ՅՏԴ 82.97:811.19

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

*ԳԱՎ Մ.Աբրեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի հանրապետություն
siranush.parsadanyan.2014@mail.ru*

Հայ կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Հովհաննես Միրզայան Վանանդեցին (1772-1841 թթ.), հեղինակել է նաև քահանաների համար նախատեսված «Կերակուր քահանայից» գործը, որը ժամանակին մեծ տարածում է ունեցել և բազմիցս ընդօրինակվել թե՛ իր ժամանակակից, թե՛ հետագա գրիչների կողմից:

Հոդվածում անդրադարձ է կատարվում «Կերակուր քահանայից» երկի՝ հայկական միջավայրում տարածմանը, ցույց է տրվում, թե ինչ աշխատանք է կատարել Հովհ. Վանանդեցին՝ տեղայնացնելով այն հայ եկեղեցական միջավայրի համար:

Կատարվել է նաև կառուցվածքային վերլուծություն՝ գրքի յուրաքանչյուր բաժնի առանձին անդրադարձով:

Քանի որ երկը բավականաչափ հազեցած է մեքքերումներով, հոդվածում օրինակներով մանրամասն ցույց է տրվում նաև, թե ինչպես է հեղինակը կաթոլիկ եկեղեցու հայրերից բերած օրինակներին հավելում նաև հայ հոգևոր գործիչների դիտարկումները՝ փորձելով հնարավորինս հայացնել նյութը:

Հոդվածում նաև «Կերակուր քահանայից» երկի՝ Հովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը համեմատվել է Աստվածատուր Չուղայեցու խմբագրած տարբերակի հետ:

Ի վերջո, հանգում ենք այն եզրակացությանը, որ «Կերակուր քահանայից» գրքի՝ Հովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը՝ գրված գեղեցիկ ու գրագետ գրաբարով, ժամանակի կարևոր երկերից մեկն էր, որ մի աստիճան վեր բարձրացրեց հայ հոգևոր մտքի ընկալումը:

Բանալի բառեր՝ Հովհաննես Վանանդեցի, «Կերակուր քահանայից», Չմյունխա, խմբագրել, եկեղեցական, Վարդան Հունանյան, Աստվածատուր Չուղայեցի, կաթոլիկ:

Հովհաննես Միրզայան Վանանդեցին (1772-1841թթ.) հայկական կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչներից է: Նա իրավամբ համարվում է հայ պոեզիայի հայրենասիրական, պատմաբաղաձայն ուղղության սկզբնավորողը: Նրա ներդրումը անգնահատելի է հատկապես Չմյունխայի հայ համայնքի կրթական գործում: Չմյունխայի Մերոպյան վարժարանում Հովհ. Վանանդեցին երկար տարիներ աստվածաբանություն ու հայկաբանություն է դասավանդել և տասնութ ու կես տարի ուսուցչություն անելուց հետո՝ 1822 թ.-ին, տեղի վերատեսուչ Փիլիպպոս արքեպիսկոպոսի հրամանով ձեռնադրվել սարկավագ, ապա քահանայի աստիճան ստացել և Ստեփանոս արքեպիսկոպոսի հորդորով մի առանձին գրքով, որ կոչվում է «Կերակուր քահանայից» (այսինքն՝ հոգևոր մտունդ քահանաների համար), բացատրել

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2019թ., գրախոսվել՝ 21.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

քահանաների պարտականությունները⁵⁶¹: Հիշատակարանում նշված Ստեփանոս արքեպիսկոպոսը Չմյուռնիայի նվիրակ ու առաջնորդ Ստեփանոս Ենովթյան Թիֆլիզեցին է⁵⁶²:

Այդ գիրքը ժամանակին մեծ տարածում է ունեցել և ընդօրինակվել է թե՛ իր ժամանակակից, թե՛ հետագա գրիչների կողմից: Անգամ Հովհ. Վանանդեցին է մի քանի անգամ այն ընդօրինակել:

Այդ առիթով նկատված է մի հետաքրքիր փաստ. Հովհ. Վանանդեցու «Կերակուր քահանայից» գրքի չորս օրինակների հիշատակարաններում էլ գրիչը, որպես գրողական ժամանակ, նշում է 1822 թվականը, ընդ որում՝ սրանցից երկուսի դեպքում (Եղմ. ձեռ. 221, Արմաշ ձեռ. 136) համընկնում է նաև ձեռագրերի գրման ամսաթիվը՝ հունիսի 18: Ուսումնասիրությունները բացառում են այն հանգամանքը, որ սրանք կարող են միևնույն ձեռագիրը լինել⁵⁶³:

«Կերակուր քահանայից» երկը, ըստ աղբյուրագիտական տվյալների, Վարդան կրոնավորի կողմից թարգմանվել է լատիներենից, ապա Նորից շարադրվել Հովհ. Վանանդեցու կողմից: Այդ մասին հանգամանակից տեղեկություն է տալիս հեղինակը գրքի սկզբնամասում. «Ոչ միայն զշարադրութիւնս առաջին բանիցն փոփոխեցի, այլ եւ զբազում եւս Նոր վկայութիւնս եւ բացատրութիւնս եւ իմաստս իսկ 'ի Նոյն յաւելի' մինչև մարթ լինիլ ասել Նորոգ շարադրեալ, թեպէտ եւ հիմն եղեալ էր Նախագոյն»⁵⁶⁴: Այսինքն, Հովհ. Վանանդեցին կատարել է մի շարք փոփոխություններ, հավելումներ, հարմարեցրել այն մեր լեզվին, հայ եկեղեցական սովորույթներին ու ծեսերին, կարելի է ասել՝ տեքստին հայկական շունչ է հաղորդել:

«Կերակուր քահանայից» երկը երկար ժամանակ վերագրվել է կաթոլիկ եկեղեցու նշանավոր գործիչ Հովհաննես Բոնա (Յովհաննես Պոնա) կարդինալին: Երկի հեղինակային պատկանելության հարցը մինչ օրս էլ վերջնական լուծում չի ստացել⁵⁶⁵:

Հովհաննես Բոնա կարդինալին և Նրա երկերի հայերեն թարգմանություններին առաջին անդրադարձել է Աթանաս Տիրոյանը (Վենետիկի Մխիթարյան հայրերից): Իր հոդվածում «Կերակուր քահանայից» գրքի հեղինակային պատկանելության վերաբերյալ նա գրում է. «Այս գործը Կարդ. Բոնայի չի վերաբերիր, թեպէտև ճակատին վրայ դրոշմուած է «Հաւաքեալ ի գործոց Կարդ. Պոնայի, և թարգմանեալ ի լատինէ ի հայ բարբառ»: Գուցէ թէ հաւաքմունք մ' է ըստ իմաստից, այլ ոչ ըստ բանից կամ գլխոց. վասն զի այս գրքին մեջ զետեղուած գլխակարգութիւններէն և ոչ մին կը գտնուի Բոնայի գործերուն մէջ, և ոչ իսկ գրքին ընթացքին մէջ յիշուած է Բոնայի անունը, մինչդեռ իրենց յատուկ կոչումներով մէջ կը բերուին ստեպ վկայութիւններ Ս. Յովհ. Ոսկեբերանէ, Ս. Ազուստինոսէ, Ս. Բեռնարդոսէ, Ս. Կիպրիանոսէ և ուրիշ Ս. Հայրերէն և վարդապետներէն»⁵⁶⁶:

«Կերակուր քահանայից» երկը 1760թ. հրատարակվել է Վենետիկում Անտոնի Պոռթոլի տպարանում՝ տեր Աստվածատուր Ջուղայեցու կողմից (վերջինս նույնացված

⁵⁶¹ Տե՛ս **Կանայեանց Սո.**, Յուզակ հայերեն ձեռագրների Թիֆլիզի Ներսիսեան հոգեւոր դպրանոցի, Թիֆլիզ, 1893 թ., էջ 26:

⁵⁶² Տե՛ս **Ասատրյան Ա.**, «Հովհան Միրզայան Վանանդեցու ձեռագրական ժառանգությունը», «Էջմիածին» հանդես, 2018 թ., փետրվար, էջ 108-109:

⁵⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

⁵⁶⁴ **Միրզայան Հովհ. Վանանդեցի**, Կերակուր քահանայից, Էջմիածին, 1858 թ., էջ 1:

⁵⁶⁵ Տե՛ս **Հարությունյան Գ.**, «Հովհաննես Բոնա կարդինալին վերագրված «Կերակուր քահանայից» երկի հայերեն թարգմանությունը և Հովհաննես քին. Միրզայան Վանանդեցու խմբագրությունը», Երիտասարդական երրորդ գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2018 թ., էջ 96-104:

⁵⁶⁶ **Տիրոյեան Ա.**, «Կարդինալ Բոնա և հայերը», «Բազմավեպ», Վենետիկ, թ. 5-6, 1910 թ., էջ 204-205:

Ե Աստվածատուր Բաբիկյանի հետ⁵⁶⁷): Այդ հրատարակության մեջ առհասարակ չի հիշատակվում Վարդան Յունևյանի անունը: Պատճառները կարող են տարբեր լինել, թեպետ չի բացառվում նաև, որ խմբագիրը միտումնավոր է լռություն պահպանել⁵⁶⁸:

Յ.Անասյանը, խոսելով 1760 թվականի հրատարակության մասին, այն կարծիքն է հայտնում, որ վերջինս պարզապես Վ. Յունևյանի թարգմանության վերախմբագրությունն է, որի լեզուն առավելապես լատինաբան է, իսկ խմբագրինը՝ սրբագրված ու կանոնավոր: Ըստ նրա՝ չի բացառվում նաև այն հանգամանքը, որ Աստվածատուր Ջուղայեցին խմբագրական աշխատանք կատարելիս օգտված լինի նաև երկի լատիներեն բնագրից⁵⁶⁹:

1841 և 1858թթ. «Կերակուր քահանայիցը» հրատարակվել է Ս. Էջմիածնում՝ ենթարկվելով որոշ կառուցվածքային փոփոխությունների՝ արդեն Յովհ. Վանանդեցու խմբագրությամբ:

Յովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը բաղկացած է ընծայաբերությունից, «Յաղագս պատուոյ քահանայից» հատվածից, 18 (ժը) գլուխներից, 4 պրակներից և «Ազդեցութիւն հեղինակին առանց ինչ յաւելման» վերջնահատվածից, որն ամփոփում է երկը՝ կատարելով վերջաբանի դեր:

Ա.Տիրոյանը, խոսելով 1760 և 1841թթ. հրատարակությունների մասին, հանգում է հետևյալին. «Այս գրքիս առաջին տպագրութեան պարունակութիւնն թէ և բարի և շատ օգտակար, սակայն լեզուն աղաւաղ և անպետ. իսկ Ս. Էջմիածնի տպագրութիւնն բաւական ընտիր և մաքուր գրաբարով յարասութիւն մ՛ է, քան թէ առաջին թարգմանութեան կրկին տպագրութիւն»⁵⁷⁰:

Կառուցվածքային-բովանդակային տեսանկյունից համեմատելով «Կերակուր քահանայից» գրքի՝ Ա. Ջուղայեցու և Յովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակները՝ կարող ենք արձանագրել մի շարք տարբերություններ: Այսպես, Ա.Ջուղայեցու խմբագրած տարբերակը բաղկացած է քաներկու գլխից, «Վերջաբանութիւն» հատվածից, որին այնուհետև հաջորդում են Զրիստոսի հետ սրբուհի Բրիջիտայի «Խօսակցութիւնը» կամ «Յայտնութիւնը», ապա նաև հարց ու պատասխանի ոճով անդրադարձ է կատարվում ծիսական մի շարք թեմաների «Յաղագս խորհրդոց», «Յաղագս խորհրդոյ կարգի առ հասարակ», «Յաղագս իւրաքանչիւր աստիճանաց կարգի», «Յաղագս ամենասուրբ պատարագի և խորհրդոյ հաղորդութեան մարմնոյ և արեան Տեան», «Յաղագս եկեղեցականաց բանադրանաց» գլուխներում⁵⁷¹:

Արդեն նշվեց, որ Յովհ. Վանանդեցին կատարել է հավելումներ: Մասնավորապես գրքում զետեղված չորս պրակները ենթադրվում են Յովհ. Վանանդեցու կողմից ավելացված⁵⁷²:

«Կերակուր քահանայից» գիրքը նախատեսված է եղել քահանաների համար և հիմնականում ուղեցույցի դեր է կատարել: Այն բավականաչափ հագեցած է մեջբերումներով, որոնք առավելապես բաղված են Աստվածաշնչից⁵⁷³ և Սուրբ Յովհան Ոսկեբերանի ճառերից⁵⁷⁴, չնայած քիչ չեն հիշատակվում նաև Սուրբ Ամբրոսիոսի⁵⁷⁵, Օգոստինոսի⁵⁷⁶, Բեռնարտոսի⁵⁷⁷, Յերոնիմոսի⁵⁷⁸ և կաթոլիկ այլ սրբերի անունները:

⁵⁶⁷ Տե՛ս Անասյան Յ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. 9, Երևան, 2004 թ., էջ 96:

⁵⁶⁸ Տե՛ս Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 100:

⁵⁶⁹ Տե՛ս Անասյան Յ., նույն տեղում:

⁵⁷⁰ Տիրոյան Ա., նշվ. աշխ., էջ 205:

⁵⁷¹ Տե՛ս Ջուղայեցի Ա., Կերակուր քահանայից, Վենետիկ, 1760 թ., էջ 97-147:

⁵⁷² Տե՛ս Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 104:

⁵⁷³ Տե՛ս Միլոզայան Յովհ. Վանանդեցի, նշվ. աշխ., էջ 27-28:

⁵⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 7:

⁵⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

⁵⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 21:

Գրքում խոսվում է քահանաների մասին առհասարակ, նրանց ստանձնած դերի կարևորության, պարտականությունների, նրանց առջև ծառայած խնդիրների, ինչպես նաև՝ պատարագի անցկացման կարգի, պատարագի կյուրթի և այլ կարևոր հարցերի շուրջ:

Ինչո՞ւ է Յովի. Վանանդեցին փոխադրելիս ընտրել «Կերակուր քահանայից» վերնագիրը: Պատասխանը տալիս է դարձյալ հեղինակը երկի առաջամասում. «Ապա զի՞նչ այլ ինչ աղաւաղիչ կայցէ բարեկարգութեան քան զհպատակացն չբերիլ հնազանդութեամբ յօրինաւոր հրամանս վեհագունից: Վասն այնորիկ եւ նուաստախոհ անձինս փրկութեան յԱռաքելաշունչն հրամանէ սրբազնութեան ձեր 'ի յարդարումս բանիս կոչեցեալ՝ մանաւանդ 'ի կատարումս հրամանաց քան 'ի տկարութիւն մտացս հայելով՝ յանձն առի զտետրակս զայս կերակուր քահանայից անուանել 'ի յստակ ոճ հայկական լեզուի յարմարագրել, զոր Վարդան ոմն արեղայ թարգմանեալ էր յառաջագոյն 'ի լատին լեզուէ»⁵⁷⁹: Սակայն այդ հիմնավորումը կարող է տարակարծության տեղիք տալ. արդյո՞ք «Կերակուր քահանայից» վերնագիրը պատկանում է Յովի. Վանանդեցուն: Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ Ա.Չուղայեցու կողմից թարգմանված և խմբագրված տարբերակը ևս նույն վերնագիրն է կրում: Այդ առիթով էլ կարելի է հավելել, որ ուսումնասիրությունների արդյունքում Յովի. Բոնայի երկերի շարքում գոնե նման խորագրով կամ գլխաբաժանումներով երկ չի հայտնաբերվել⁵⁸⁰:

Յովի. Վանանդեցու հիշատակած Վարդան արեղան նույն ինքը Վարդան Յունանյանն է, որը ժամանակի խոհեմ ու գիտակ հոգևորականներից էր⁵⁸¹: Նա կատարել է մի շարք թարգմանություններ, որոնցից ամենատարածվածը հենց այս գիրքն է, ինչպես նաև Յովիաննես Բոնայի հեղինակած «Ձեռքածութիւն յերկինս» երկը (1674 թ.)⁵⁸²:

Առաջին գլխում, որ վերնագրված է «Թե արքայական է քահանայական պատիս», խոսվում է քահանաների մեծության և նրանց կատարելիք բացառիկ առաքելության մասին մեծ հավատով ու վստահությամբ: Յեղիակը համոզված է՝ քահանաները մեծ առաքելություն ունեն կատարելու. «Բայց դուք քահանայք տեսն կոչիջի՞ք, եւ պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջի՞ք, զգօրութիւնս ազգաց կերիջի՞ք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջի՞ք»⁵⁸³:

Յովի. Վանանդեցին բարձր է գնահատում քահանաների կատարած դերը ժողովրդի կյանքում: Վերոնշյալ գլխում նա օրինակներ է բերում Աստվածաշնչի երկրորդ Օրինաց գրքից՝ ցույց տալով քահանաների մեծությունը և նրանց կատարած դերի կարևորությունն ու արժեքը: Բոլոր ժամանակներում քահանաները կարևոր մարդիկ են եղել, ուստի հնում բազում գավառների դատավորները հաճախ հենց քահանաներն էին: Յովի. Վանանդեցին վկայակոչում է աստվածաշնչյան հատվածը. «Վասն որոյ եւ հրամայէր Աստուած իսրայելացւոց Բ Օրինաց. ԺԵ 9: Երթայցես առ քահանայսն եւ քննեալ պատմեսցես քեզ զդատաստանն եւ արասցես ըստ հրամանին, զոր պատմեսցես քեզ»⁵⁸⁴:

Երկրորդ գլխում, որը կրում է «Թե քահանայք գեր 'ի վերոյ են քան զմարդիկ. եւ են

⁵⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

⁵⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

⁵⁷⁹ Նույն տեղում, էջ 1:

⁵⁸⁰ Տե՛ս **Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., էջ 104:

⁵⁸¹ Տե՛ս **Ռոշթա Ստ.**, ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964 թ., էջ 198:

⁵⁸² Այս մասին մանրամասն տե՛ս **Դևրիկյան Վ.**, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Բ, Երևան, 2014 թ., 181-194:

⁵⁸³ **Միրզայան Յովի. Վանանդեցի**, նշվ. աշխ., էջ 3-4:

⁵⁸⁴ Նույն տեղում:

հրեշտակք» ենթավերնագիրը, խոսվում է այն մասին, որ քահանաները սովորական, շարքային մահկանացուներից մի քանի աստիճան վեր են կանգնած և նույնիսկ հավասար են հրեշտակներին: Վկայակոչվում է Սուրբ Գրքի Յովհաննու ավետարանի Ժե գլխի 17-րդ համարը. «Դուք ո՛չ էք յաշխարհե, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհե»⁵⁸⁵: Քահանաներին հրեշտակների հետ են համեմատել Յովհան Ոսկեբերանը, Պողոս առաքյալը, Յերոնիմոսը:

Եթե շարքային մահկանուցուներին հատուկ է մեղք գործելը և ապաշխարելով կարող են թողություն ստանալ, ապա քահանաների գործած մեղքերը Աստծու կողմից դժվարությամբ են ներվում, քանի որ այդ հանցանքները շատ են վշտացնում Բարձրյալին: Այսինքն՝ քահանաներն իրենց հոգու փրկության համար ավելին են վճարում: Յեղիակը վկայակոչում է Օգոստինոսին. «Որք անարժանութեամբ զՔրիստոս պատարագեն, որ թագաւորե այժմ յերկինս, ծանրագոյն ևս մեղանչեն, քան զայնոսիկ, որք խաչեցին զնա մինչ շրջեր 'ի յերկրի'»⁵⁸⁶:

Թերևս ամենահետաքրքրականը գրքում գետնոված չորս պրակներն են, որոնք վերաբերում են պատարագի մատուցմանը, պատարագի մատուցման ժամանակ առաջացած թերություններին, պատարագի նյութին, վերջինիս պակասությանը, պատարագը մատուցող քահանային, նրա թերություններին:

Սուրբ պատարագի խորհուրդը պահանջում է ամբողջականություն և ամենայն կատարելություն բոլոր առումներով. «Վասն այնորիկ հարկաւոր են մատակարարքն ամենազգաստ արթնութեամբ փոյթ յանձին ունիլ, զի մի՛ թերութիւն ինչ կամ արատ պակասաւորութեան զմաքրագործ շնորիս նորա նուագեսցուցէ, կամ իսպառ խափանեսցէ»⁵⁸⁷:

Սուրբ պատարագի նյութը ցորենի հացն է ու անապակ գինին: Եթե հացը պակասություն է անում և, հնարավոր է, չբավարարի, կարելի է փոխարինել հաճարի, գարու, անգամ՝ կորեկի հացով: Իսկ եթե ցորենի հացը բավարար է, բայց ապականված է, խառնված է մեղրի, յուղի հետ կամ բավարար չափով եփված չէ, կամ էլ գուցե՝ արևից չորացած, հետևաբար չպետք է մատուցել պատարագը այդպիսի անմաքուր նյութով: Այն քահանան, որ կհանդգնի, այնուամենայնիվ, պատարագը մատուցել անմաքուր նյութով, նզովվյալ կլինի⁵⁸⁸: Նաև անընդունելի է նշխարի այլուրը թրջել վարդաջրով կամ այլ հեղուկով՝ հետևելով լատինական եկեղեցիների օրինակին: Քահանայի կողմից կոպիտ սխալ կլինի, եթե նման դեպքերում չկողմնորոշվի և չիմանա ինչպես վարվել:

Իսկ եթե, օրինակ, նշխարը անարատ է, բայց մկրտության ժամանակ քահանան հայտնաբերում է, որ մուկ է անցել վրայով, ապա պետք է ամեն դեպքում ավարտին հասցնի պատարագը և ապա երեք շաբաթ, կանոնի համաձայն, պատիժ կրի: Իսկ եթե նախապես տեղյակ է լինում և անփութորեն մատուցում է պատարագը, մի ամբողջ տարի պետք է ապաշխարի՝ թողություն խնդրելով անփութության համար⁵⁸⁹: Գինին պետք է լինի անխառն, անապակ, չի կարելի նրան ջուր կամ քացախ խառնել:

Իսկ պատարագը, ըստ եկեղեցական կարգի, կարող է մատուցել միայն ճշմարիտ ու օրինավոր քահանան, որ չլինի անգործույթ կամ բանադրված և կարողանա արժանավոր կերպով մատուցել սուրբ պատարագը:

Գիրքը եզրափակվում է «Առ ազդեցութիւն հեղինակին առանց ինչ յաւելման» վերնագիրը կրող ազդեցիկ հատվածով, որտեղ կոչ է արվում քահանաներին բարելավել իրենց հոգևոր վիճակը, ապրել մաքրագույն կյանքով, լինել ճշմարիտ, առաքինի օրինակ ժողովրդի համար, մնալ իրենց կոչմանը հավատարիմ, երբեք չուրանալ այն զոհը, որ

⁵⁸⁵ Նույն տեղում, էջ 5:

⁵⁸⁶ Նույն տեղում, էջ 38:

⁵⁸⁷ Նույն տեղում, էջ 89-90:

⁵⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:

⁵⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 94-95:

կատարեց Փրկիչը իր հոտի համար. «Ծանի՛ր ապա զվիճակ քո մաքրագոյն, թէ յո՞րպիսի պատիւ ճոխացար, զի զոր կոյսն երանեալ ամենասուրբ մայրն Մարիամ մի անգամ և եթ՝ ծնաւ, դու ինքն քանիցս անգամ եւ պատարագես, բանիւ զնոյն կատարես, իբրև 'ի սեղանոյ վայելես, եւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնովն եւ արեամբ կերակրիս»⁵⁹⁰:

Ինչպես նշվեց, Յովհ. Վանանդեցին փորձել է գրքին հայկական շունչ հաղորդել: Այսպես, քիչ չեն այն հատվածները, որոնցում հեղինակը, տարբեր առիթներով վկայակոչելով կաթոլիկ հայրերին, հղում է կատարում նաև հայ եկեղեցու երախտավորներին: Առավելապես հիշատակվում է Ներսես Շնորհալին, թեպետ հաճախ են մեջբերվում նաև Գրիգոր Նարեկացին, Յովհաննես Իմաստասերը, Սարգիս Շնորհալին: Ահա հեղինակը, քննադատելով քահանաների անգիտությունը և հիշատակելով կաթոլիկ եկեղեցու հայրերին, հղում է կատարում նաև Ն. Շնորհալուն. «Լսեմք՝ ասե սուրբն Ներսես Շնորհալին, զոմանց սուտ քահանայից, զի ո՛չ յայլ ուսմանէ են տգետ յաղագս յեղգութան, մանաւանդ թէ վասն անհաւատութան, այլ եւ զաղմոսն Դավթի ո՛չ զիտեն բովանդակ»⁵⁹¹: Պատարագին նվիրված պրակներից մեկում հիշատակվում է Ս. Գրիգոր Նարեկացին. «Արդ՝ նախ չէ՛ կարելի մատուցումն պատարագի արտաքոյ սուրբ եկեղեցոյ եւ ո՛չ 'ի յեկեղեցի՝ որ ո՛չ օծեալ իցէ, եւ չունիցի զբեմ եւ զօծեալ վեմ, զի արդարև հերքի այր ըստ օրինի, որ արտաքոյ Սուրբ եկեղեցոյ մատուցանէ զՍուրբ պատարագն ըստ Սրբոյն Գրիգոր Նարեկացոյն»⁵⁹²:

Այսպիսով՝ «Կերակուր քահանայից» երկի՝ Յովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը ժամանակի լայն տարածում գտած երկերից է, որ, գրված լինելով գեղեցիկ ու ականջահաճո գրաբարով, մի աստիճան վեր բարձրացրեց հայ հոգևոր մտքի ընկալումը:

«KERAKUR K'AHANAYIC» («FOOD FOR PRIESTS») BY HOVHANNES VANANDETSI

SIRANUSH PARSADANYAN

*PhD student of Institute of literature after M. Abeghian of NAS of RA,
Yerevan, Republic of Armenia*

Hovhannes Mirzayan Vanandetsi, one of prominent Armenian classics representatives, also wrote «Food for priest» for priests, which once was very popular and it was used both by contemporaries and by further writers.

The propagation of the novel «Food for priest» in Armenia is reflected in the article. It also illustrates the work Hovhannes Mirzayan Vanandetsi undertook informing the Armenian religious leaders about it.

A structural analysis was also undertaken, referring separately to each Chapter of the book.

The novel is rather full of references; the fact that the author added Armenian clergymen's views to the samples of catholic Armenians trying to make the content as Armenian as possible is thoroughly described.

«Food for priest» edited by Hovhannes Mirzayan Vanandetsi was also compared with the version edited by Astvatsatur Julayec'i.

⁵⁹⁰ Նույն տեղում, էջ 112:

⁵⁹¹ Նույն տեղում, էջ 53:

⁵⁹² Նույն տեղում, էջ 107:

Eventually we can conclude that «Food for priest» edited by Hovhannes Mirzayan Vanandetsi, written in nice and intelligent old Armenian is one of the main novels of the time, which put the perception of Armenian spiritual thought on a higher level.

Keywords: Hovhannes Vanandetsi, «Food for priest», Smyrna, edit, clergyman, Vardan Hunanyan, Astvatsatur Julayec'i, catholic.

РАБОТА ОВАНЕСА ВАНАДЕЦИ «ПИЩА ДЛЯ СВЯЩЕННИКОВ»

СИРАНУՍՍ ՓԱՐՏԱԴԱՆՅԱՆ

*аспирант института литературы имени М.Абебяна НАН РА,
г.Ереван, Республика Армения*

Один из видных представителей армянского классицизма Ованнес Мирзаян Ванандеци (1772-1841) также является автором работы «Пища для священников», которая в свое время имела большой резонанс и служила примером как для современников, так и последующих авторов.

В статье описывается распространение произведения «Пища для священников» в армянской среде и, в частности, говорится о том, какую деятельность развернул сам Ованнес Ванандеци в деле информирования о нем армянских религиозных деятелей.

Нами был совершен еще и структурный анализ, отдельно ссылаясь на каждую главу книги.

В произведении достаточно много ссылок и на конкретных примерах продемонстрировано, как автор дополняет приводимые примеры отцов католической церкви наблюдениями армянских религиозных деятелей, пытаясь по возможности приблизить тему к армянским реалиям.

В статье также проводится сравнение между редакциями произведения «Пища для священников» Ованнеса Ванандеци и Аствацатура Джугаеци.

В конечном итоге, мы приходим к мнению, что «Пища для священников» под редакцией Ованнеса Ванандеци, написанная на правильном и великолепном грабаре, является одним из важнейших произведений своего времени, которое поставило восприятие армянской духовной мысли на ступень выше.

Ключевые слова: *Ованнес Ванандеци, «Пища для священников», Смирна, редактировать, церковный, Вардан Унанян, Аствацатур Джугаеци, католический.*